**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«07» ապրիլի 2026 թ. N 45-Ա/1

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 62-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 366-Լ որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2025 թվականի հուլիսի 4-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 62-Ա/1 հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 2-րդ կետի 2-րդ ենթակետում և 6-րդ կետում «ծավալի» բառից հետո լրացնել «(օրական 8 ժամ աշխատանքի համար)» բառերով.

2) 6-րդ կետում՝

ա. «3500» թիվը փոխարինել «7000» թվով,

բ. «սոցիալական վճարը» բառերից հետո լրացնել «, ընդ որում՝ նշված գումարը տրամադրվում է աշխատած ժամերին համապատասխան» բառերով:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360

2026-04-07 18:57:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ